



Կ Ո Չ Ն Ա Կ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ

94

6 դեկտեմբերի 2009թ.

Էլեոնորա Էսմեքյանի Լիբանանյան օրագիրը

շարունակություն

17 հոկտեմբերի 2009թ.

Այսօր Բեյրութի շրջակա տեսարժան վայրերն այցելելու հազեցած ծրագիր ունենք: Առաջինը՝ այցելություն Անայա կոչվող մենաստանը, որտեղ գտնվում է ս.Շարբեղի դամբարանը: Վերջինս եղել է մարոնիտ հոգևորական, որը դեռ կյանքի օրոք վայելել է սրբի համբավ, ապրել է վանականի խիստ կանոններով:

Նրա հուղարկավորությունից հետո գերեզմանը լուսարձակում է, մարմնից քրտինք ու արյուն է հոսում, մարմինը տեղափոխում են հատուկ դամբարան, որը սրբատեղի է դառնում ուխտավորների համար: 1977թ.վականին հայր Շարբեղին սուրբ են կարգում, նրան վերագրվում են բազմաթիվ հրաշքներ:

Հայր Գևորգին թույլ տվեցին պատարագ մատուցել սրբի եկեղեցում: Մա բացառիկ դեպք էր, որ պատարագում է օտար հոգևորական, երևում է, որ հայր Գևորգը մեծ հարգանք և վստահություն է վայելում, զի այսօրինակ պատվի արժանացավ: Նրան օգնում էին ֆրանսիացի կաթողիկե հոգևորական և արաբ քրիստոնյա Ջոնին: Դամբարանից բխող էներգիան յուրահատուկ հանդիսավորություն էր հաղորդում պատարագին, որի ավարտին հայր Գևորգն ասաց. «Ինչի մասին աղոթում էիք, կիրականանա»: Թող այդպես լինի...

Երկրորդ վայրը, որ այցելեցինք լիբանանցի հայտնի գրող Ժեֆրան

Խալիլի տուն-թանգարանն էր Բիշարի գյուղում: Դժվարանում եմ դատել նրա գրական ստեղծագործությունները, սակայն Լիբանանի այս տաղանդավոր գավակի նկարները յուրահատուկ էին: Ամենուր բնության ֆոնի վրա պայծառ գույներով մերկ մարմիններ են պատկերված. Հստ հեղինակի մարդկային մերկությունը մաքրության և անմեղության խարհրդանիշ է:

Ժեֆրանը ճանաչված է ԱՄՆ-ում, որտեղ անց է կացրել կյանքի մեծ մասը, սակայն մահից հետո տեղափոխվել և մայր հողի գիրկն է հանձնվել իր իսկ կամքի համաձայն: Նրա բոլոր գրքերն ու նկարները տուն-թանգարանին են նվիրաբերվել նրա ամերիկուհի կնոջ կողմից:

Երրորդ այցելությունը, որ մենք ունեցանք՝ զբոսանքն էր մայրիների անտառում Արզ բարձրադիր լեռան գագաթին: Իրական վայելք է շնչել մաքրամաքուր օդը, զմայլվել լեռնային տեսարաններով բազմադարյա և բոլորովին երիտասարդ մայրիների հարևանությամբ: Մայրի ծառը համարվում է Լիբանանի կանաչ խորհրդանիշը և երկրի գերբի ու դրոշի վրա պատկերված է այս փշատերևը: Որպես զբոսանքի եզրափակում՝ այցելեցինք ս.Անտոնիոսի ժայռափոր եկեղեցին, որն ինձ հիշեցրեց Հայաստանում Գեղարդի վանքը: Տարբերությունը կայանում է

նրանում, որ այստեղ եկեղեցուն հասնելու համար համարյա մեկ ժամ պետք է իջնել լեռնային կտրուկ զառիթափով:

Ավարտվում է շաբաթ օրը, Բեյրութը լցված է մեքենաներով: Համարյա քսան տարվա վարորդական փորձս անգամ թույլ չէր տալիս մտածել դեկին նստելու մասին, քանի որ այստեղ երևելության կանոնների մասին խոսելն ավելորդ է, սակայն այնուամենայնիվ, վարորդները շրջահայաց են, քաղաքավարի և զգույշ: Երևի դա է պատճառը, որ չհանդիպեցինք ոստիկանի, բացի մեկ անգամից՝ Բուրջ Համուտի փողոցներից մեկում վթարված Զիպ մականիշի մեքենայի կողքին, որի վարորդը երևի շփոթել էր գազի և արգելակման ոտնակները...

Այսպիսին տեսանք մենք Բեյրութը... իհարկե մեկ շաբաթը շատ քիչ է խոր վերլուծություններ կատարելու համար, ձեր դատին ներկայացվեցին մեր այցելությունների հավաքածուն, մեր տպավորությունները, ստացած ինֆորմացիան դեռ երկար պետք է եփվի, մինչև իսպառ յուրացվի:

Իսկ վաղը մեր այցելության կարևորագույն օրն է. տեղի կունենա ս.Մյուռոնի օրհնության արարողությունը ս.Եղիայի տաճարում: Սպասում ենք անհամբերությամբ և սրտի թրթիռով:

18 հոկտեմբերի 2009 թ.

Վաղ նախաձեռն, ա.Մյուռոնի օրհնության արարողությունը կսկսվի



մի քանի ժամից, բացի այդ հայր Գևորգը այցելություն է պլանավորել հայ կաթողիկե ևս երկու եկեղեցի: Առաջինը՝ ա. Խաչ եկեղեցին է, որը քրիստոնեական եկեղեցիների համար յուրահատուկ ճարտարապետություն ունի՝ դեպի երկինք բարձրացող եռանկյուն տանիքով: Եկեղեցին գտնվում է Զալկա կոչվող բեյրության թաղամասի տների բակում: Ի հարգանք հարևան բնակելի տների՝ եկեղեցին չունի զանգակատուն և զանգեր, ամեն ինչ շատ կոկիկ է զուսպ, շենքի վերին մասում պատի



լայնքով մեկ ընդարձակ պատկեր է, որը հիշեցնում է Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիքը» աշխատանքը Միլանի Սանտա Մարիա դել Գրացիա տաճարում: Սակայն տարբերությունը նրանում է, որ այստեղ աշակերտների փոխարեն Հիսուսի կողքին պատկերված են հոգևորականներ, որոնք ծառայել են այս եկեղեցում: Փրկչի աջ կողմում տեսնում են արդեն ծանոթ Անդրանիկ Գրանյանին, որի առջև սեղանին դրված է «Մասիս» ամսագիրը:

Երկրորդ եկեղեցին, որն այցելեցինք ա.Փրկչ անունն էր կրում: Այն գտնվում էր Մեսրոպյան վարժարանի բակում, կառուցվել է 1953թվականին: Շատ կցանկանայի էլի ու էլի մնալ խորանի առջև, դիտել ներքին հարդարանքը, ճերմակ եկեղեցու տեսքով խորանը, սակայն պետք է շտապել ա. Եղիայի եկեղեցի, որտեղ կարևորագույն իրադարձությունը պետք է տեղի ունենա:



Քաղաքի կենտրոնական հրապարակը և հոյակերտ տաճարը: Ամենուր հանդիսավորություն է զգացվում: Խորանը զարդարված է բնական ծաղիկներով և կենտրոնում ճերմակ վարդերով հիսուն թվանշանն է պատկերված ի պատիվ եկեղեցու հիսունամյա հոբելյանի, որը նշվել է անցյալ տարի: Խորանի առջև, ոսկեհուռ սփռոցով ծածկված սեղանին դրված է մեծ ձվաձև թաս, որտեղ պետք է լցվի Մյուռոնը:

Բազմաթիվ տեսահանման խցիկներ, բարձրախոսներ, արարողությունը պետք է ուղիղ հեռարձակվի տեղական և արտասահմանյան հեռուստաալիքներով: Առաջին պլանում խորանի առջև տեսնում են Վարդան Կազանջյանին՝ լուրջ



գործնական և կոնտրոնացած, մյուսները շարունակ նրան են դիմում, խորհրդակցում: Ավելի ուշ իմացա, որ նրան է վստահված արարողակարգի ղեկավարության խիստ պատասխանատու աշխատանքը: Առաջին շարքերում տեղ են զբաղեցնում տարբեր եկեղեցիներից, քաղաքի ղեկավարությունից պաշտոնական ներկայացուցիչներ, հովանավորներ և բարեգործներ արտասահմանից: Նկատում են Իտալիայից Անջելո և Բարբարա Բոսիոներ ամուսական զույգին, որոնք այստեղ են հասել հատուկ այս արարողությանը մասնակցելու համար:

Սպասումից մթնոլորտը թեժանում է... Ահա բացվում են տաճարի գլխավոր դարպասները և հանդիսավոր երաժշտության ներքո ներս են մտնում տարբեր երկրներում գործող հայ կաթողիկե



բոլոր եկեղեցիների եպիսկոպոսները, նրանց հետ է նաև կաթողիկոսը: Բոլորը տոնական ճերմակ ոսկեկար հանդերձանքով են: Բոլորի տեղավորվելուց հետո սկսվում է ա.Պատարագը, որը մատուցում է Ներսես Պետրոս 19-րդ կաթողիկոսը: Արծաթե թասի մեջ է լցվում Մյուռոնը, որը նախապես



պատրաստվել է անուշաբույր յուղերից: Պատարագն իր

հանդիսավորության գագաթնակետին է հասնում, երբ պատրիարքը սկսում է օրհնել Սյուռնը՝ երկու եպիսկոպոսների աջակցությամբ: Այնուհետև սրբացված հեղուկը լցվում է արծաթե հատուկ անոթների մեջ և դուրս տարվում էկեղեցուց: Երգչախումբը շարունակում է երգել, հնչում է Անաիս Կեսիկյանի քաղցրահնչյուն ձայնը: Արարողությունը եզրափակվում է, Պատրիարքի և եպիսկոպոսների դուրս գալուց հետո էկեղեցուց հեռանում են մյուսները: ս.Սյուռնի օրհնության արարողությունն ավարտվեց: Բոլորը երջանիկ են և բարձր տրամադրությամբ:

Շովափնյա ռեստորանում հանդիսավոր բանկետ էր կազմակերպված ի պատիվ Սյուռնի օրհնությանը: Բոլորը հավաքված են այստեղ: Կանգնած եմ մեր ուխտագնացների խմբի հետ, հանկարծ լսում եմ հայր Անդրանիկ Գրանյանի ձայնը, որ ինձ կանչում է իր դիմաց տեղ գրավելու: Պարզվում է, որ ռուսաստանյան հայերի թեման դեռ սպառված չէ: Այս հրավերն ընդունում եմ որպես մեծագույն պատիվ, քանի որ հայր Անդրանիկն ինքն է ընտրում իր զրուցակիցներին և զրույցի թեման: Նրա մասին ասում են, որ նա անգիջում է այն հարցերում, թե ինչի մասին գրի և ինչպես, ում հետ ընկերություն անի և ում անտեսի: Ինչպես հայր Գևորգը հետո պատմեց՝ սուր լեզուն հաշվի չի նստում և չի խնայում ոչ պաշտոն, ոչ էլ կրոն, նա միշտ ուղղախոս է:

Հայր Անդրանիկի և Ֆրանսիայի եպիսկոպոս հայր Գրիգոր Գաբրյանի հետ շարունակում ենք զրույցը Ռուսաստանի մասին, իսկ վերջում նրանց հրավիրում եմ Մոսկվա, ինչին հայր Անդրանիկը մեղմ ժպիտով պատասխանում է. «Ծրագիր լինի, անպայման կգամ»:

Մինչ հանդիպում Մոսկվայում, հայր Անդրանիկ:

19 հոկտեմբերի 2009թ.

Այսօր մեր վերջին օրն է Լիբանանում: Օրերը թռան ֆիլմի արագացված կադրերի նման՝

թողնելով հետքերի հանդիպումներ և հետաքրքիր ծանոթություններ: Իզուր չէ, որա սում են, եթե ուզում ես շատ բան հասցնել, շատ ժամանակ անցկացրու ճանապարհելով:

Այսօր նախատեսված է զբոսանք քաղաքում, թվում է թե շտապելու տեղ չունենք, սակայն մեկնումից առաջ պետք է այցելենք անչափ համակրելի մի ընտանիքի: Այս այցելության համար երկար համոզել էի հայր Գևորգին: Վերջապես. Անահիտ և Ավետիս Կեսիկյանները մեզ սպասում են ընթրիքի:

Հյուրասիրությունը բնորոշ է հայերին, սակայն Բեյրութում դա կատարելագործված է: Բնակարանի հսկայական հյուրասրահը հրաշալիորեն հարմարեցված է հյուրեր ընդունելու համար, երևում է, որ տանտերերը սիրում են հյուրեր ընդունել: Մեղանը ծանրաբեռնված է արևելյան չտեսնված, տեսակ-տեսակ քաղցրավենիքներով: Ավետիսը խմիչք է մատուցում, իսկ Անահիտ՝ բեյրության սուրճ պատրաստում: Մթնոլորտն այնքան ջերմ է և անկեղծ, բոլորն ուրախ են կրկին



տեսնվելու առիթով: Պատմում եմ Մոսկվայի մասին և հյուր կանչում մեր հայրենակիցներին: Նրանք շատ են ճանապարհորդել, սակայն Ռուսաստանում չեն եղել: «Մենք նոր ընկերներ ունեցանք, կգանք այցելության», - հաստատում է Ավետիսը:

Բարի գալուստ:

Գիշերային օդանավակայան: Անախն ու Ավետիսը ճանապարհում են մեզ հայր Գևորգի հետ: Շուտով մեր օդանավը օդ կբարձրանա և մեզ կթվա, թե այս

օրերը մենք ապրել ենք մեկ շաբաթ տևողությամբ և անչափ երջանիկ ավարտով հեքիաթում...

Զմամաի Տիրամայր, աղոթիր մեզ համար....

Է.Էսմեքյան



06.12.2009թ.



Թեսաղոնիկեցիներ

1, 1-12

1 Պողոսը, Սիդուանուր եւ Տիմոթեոսը՝ թեսաղոնիկեցիներիդ եկեղեցուն՝ մեր Հայր Աստուծով եւ Տէր Յիսուս Քրիստոսով: ²Շնորհ ձեզ եւ խաղաղութիւն մեր Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից: ³Եղբայրներ, պարտաւոր ենք միշտ գոհութիւն մատուցել Աստծուն ձեզ համար, ինչպէս որ արժանի իսկ է, քանի որ աւելի ու աւելի է աճում ձեր հաւատը, եւ շատանում է ձեզնից իւրաքանչիւրի սէրը միմեանց հանդէպ, ⁴այնպէս որ մենք ձեզնով պարծենում ենք Աստծու եկեղեցիներում ձեր համբերութեան եւ հաւատի համար՝ ձեր այն բոլոր հալածանքների եւ նեղութիւնների մեջ, որոնց դուք համբերում էք: ⁵Դրանք ապացոյց են Աստծու արդար դատաստանի, որպէսզի դուք արժանի լինէք Աստծու արքայութեանը, որի համար էլ նեղութիւն էք կրում: ⁶Եւ արդար է Աստծու առաջ, որ ձեզ նեղողներին նեղութիւն հատուցուի, ⁷իսկ ձեզ՝ նեղութիւն կրածներիդ՝ հանգիստ մեզ հետ, երբ Տէր Յիսուս յայտնուի երկնքից՝ իր հրեշտակների զօրքով՝ ⁸կրակի բոցով վրէժ լուծելու համար նրանցից, որոնք չեն ճանաչում Աստծուն եւ չեն հնազանդւում մեր Տէր Յիսուս Քրիստոսի

Աւետարանին. ⁹նրանց պատիժը պիտի լինի յախտենական կործանումը՝ հեռու Տիրոջ ներկայութիւնից եւ նրա փառաւոր գործութիւնից, ¹⁰երբ նա գայ այն օրը՝ փառաւորուելու իր սրբերի մէջ, հիացմունքի արժանի դառնալու բոլոր հաւատացեալների մէջ (քանի որ մեր վկայութեանը հաւատացիք): ¹¹Ահա թէ ինչու միշտ աղօթում ենք ձեզ համար, որպէսզի Աստուած ձեզ արժանի դարձնի ձեր կոչմանը, մինչեւ լրացնի ձեր բոլոր փափագները եւ հաւատի գործերը՝ գործութեամբ, ¹²որպէսզի փառաւորուի մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը ձեր մէջ, եւ դուք փառաւորուէք նրա մէջ՝ մեր Աստծու եւ Տէր Յիսուս Քրիստոսի շնորհի համաձայն: :



Ղուկասի Ավետարան 14, 12-24

¹²Իրեն հրաւիրողին էլ ասաց. «Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր ո՛չ քո բարեկամներին, ո՛չ քո եղբայրներին, ո՛չ քո ազգականներին եւ ո՛չ էլ քո հարուստ հարեւաններին, որպէսզի նրանք էլ փոխարէնը քեզ չհրաւիրեն, եւ քեզ հատուցում լինի:

¹³Այլ, երբ ընդունելութիւն անես, կանչի՛ր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կոյրերին ¹⁴եւ երանելի կը լինես, որովհետեւ փոխարէնը քեզ հատուցելու ոչինչ չունեն: Եւ դրա փոխարէն քեզ կը հատուցուի արդարների յարութեան օրը»: ¹⁵Երբ սեղանակիցներից մէկը այս լսեց, ասաց նրան. «Երանի՛ նրան, ով ճաշ կուտի Աստծու արքայութեան մէջ»:

¹⁶Եւ Յիսուս ասաց. «Մի մարդ ընթրիք սարքեց եւ հրաւիրեց շատերին: ¹⁷Եւ ընթրիքի ժամին իր ծառային ուղարկեց՝ կանչելու հրաւիրուածներին, թէ՛ «Եկէ՛ք, որովհետեւ ահա ամեն ինչ պատրաստ է»: ¹⁸Եւ ամենքը մէկ-մէկ սկսեցին հրաժարուել: Առաջինն

ասաց. «Ագարակ գնեցի եւ պէտք է, որ գնամ տեսնեմ. խնդրում եմ քեզ, ինձ հրաժարուա՛ծ համարիր»»: ¹⁹Եւ միւսն ասաց. «Հինգ լուծ եզներ գնեցի. գնում եմ դրանք փորձելու. խնդրում եմ քեզ, ինձ հրաժարուա՛ծ համարիր»»: ²⁰Իսկ միւսն ասաց. «Կին եմ առել, դրա համար էլ չեմ կարող գալ»»: ²¹Եւ ծառան եկաւ ու իր տիրոջը պատմեց այս: Այդ ժամանակ, բարկանալով, տանտէրն իր ծառային ասաց. «Իսկոյն դո՛ւրս եկ քաղաքի հրապարակներն ու փողոցները եւ աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կոյրերին բեր մտցրո՛ւ այստեղ»»: ²²Եւ ծառան ասաց. «Տէ՛ր, ինչ հրամայեցիր՝ կատարուեց եւ էլի տեղ կայ»»: ²³Եւ տէրը ծառային ասաց. «Դո՛ւրս եկ ճանապարհներն ու ցանկապատների առաջ եւ մարդկանց այստեղ մտցրո՛ւ, որպէսզի տունս լցուի»»: ²⁴Ասում եմ ձեզ, որ այդ հրաւիրուածներից ոչ ոք իմ ընթրիքից չի ճաշակի»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամանորյա և Սուրբ Ծնունդի տոների առիթով Մոսկվայի հայ կաթողիկէ եկեղեցու աշխատանքային գրաֆիկը

1. 24-ը դեկտեմբերի 2009թ.

Ժամը 15:30-ին ա.Պատարագ, 2010թ. Հիսուսի քավորի ընտրություն: Անակնկալ երեխաների համար, որոնց կշնորհավորի Ձմեռ Պապը:

2. 25-ը դեկտեմբերի 2009թ.

Ժամը 15:30-ին ա.Պատարագ, Շնորհավորանքներ:

3. 6-ը հունվարի 2010թվական ժամը 15:00 Հայտնության ա.Պատարագ, Զրօրհներ, շնորհավորանքներ:

Միքով տեղեկացնում ենք, որ Ս.Ծնունդի, Ամանորի և Զրօրհների կապակցությամբ վարդապետները պատրաստակամ են այցելել և

օրհնել ձեր բնակարանները: Ցանկացողները կարող են դիմել հայր Գևորգին կամ հայր Պետրոսին:



Ն Ո Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Նախորդ շաբաթվա ընթացքում մեր համայնքում տեղի ունեցան հետևյալ իրադարձությունները:

Պատկադրություն

Ռուբեն Նալբանդյան և Վերոնիկա Նազարեթյան՝ քաղաք Մոսկվա:

Շնորհավորում ենք մեր հայրենակիցներին իրենց կյանքում տեղի ունեցած երջանիկ իրադարձության կապակցությամբ:



ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղեկացնում ենք, որ Մեր եկեղեցին նվիրատվություն է ստացել մեր հավատարիմ հայրենակիցների կողմից.

- Աշոտ Նազարեթյան՝ 2000 ռուբլի գումարի տեսքով:
- Արմեն Մարգարյան՝ 1000 ռուբլի գումարի տեսքով:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում բարերարներին իրենց աստվածահաճո գործունեության համար և հաջողություններ մաղթում բոլոր ձեռնարկներում:



Հասցե

Москва ул. Малая Грузинская
19/2

Հեռախոս

1. 8-499-1309993 (Հ.Գևորգ Վարդապետ Նորատունկյան)
2. 7-926-9049149 (Հ.Պետրոս Վարդապետ Պետրոսյան)
Ֆաքս 8-495-2522534 (Ext. 119)

E-mail

noradounguian@hotmail.com
m.petros@libero.it
moscow@armeniancatholic.ru

Web site

www.armeniancatholic.ru